



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅԻ ՏԱԿ*

1867 թվականի հունվարի 16-ին պոլսահայ մտավորականությունը, էջմիածնի Ամենայն Հայոց նորբնտիր Կաթողիկոս Գևորգ Դ-ին, դեռևս Կոստանդնուպոլսում գտնված օրերին, ներկայացնում է մի հուշագիր ազգային-եկեղեցական կյանքի վերաբերյալ, ուր խոսվում է նաև անլուր և անխիղճ գալթակղությանց մասին, որոնք «գործվեցան մոտ ատենական երկու մասնավոր Կաթողիկոսությանց թեմերուն մեջ, հԱղթամար և ի Սիս, անարժան և իսպառ անարժան եկեղեցականց միջոցով» (Խզմիրլան 631): Առահի միահամուր ցանկությունն է կարգ կանոն հաստատել նաև Սոսում և Աղթամարում: Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմելով ժողովուրդը խնդրում է, որ նա «այնախիսի սրբազդությանց և Հայաստանյայց եկեղեցվու և Ազգի կործանում և աղետ սպառնացող ոճրագործությանց վրա անշուշտ արժանավոր սրտմըտությամբ կայի և Տիրողը այգին այնպիսի աղվաներեք գերծ պահելու փուլի պիտի տանի» (Խզմիրլան 632):

Գևորգ Դ պատասխանում է, որ հայ մամուկ՝ «Մասիս» (Կարապետ Ռիբուլյան), «Փորձ» (Համբարձում Ալաճաճյան), «Մանզումե» (Կարապետ Փանոսյան), «Միլն Ավարայրի» (Մարկոս Աղարեկյան), «Միածնա» (Կարապետ Չուփաճյան), «Ժամանակ» (Ստեփան Պ. Փափազյան), «գրածները իմ սրբազն պարտականություններս են. և ձեր այդ զգացածներն ալ իմ զգացմունքներս են» (Խզ-

միրլան 638): Կոստանդնոսպոլսի ժամանակի պատրիարք Պողոս Բ թագթագյան Բրուսացին (1863—1869) Գևորգ Դ-ին ներկայացնում է «Աղթամարայ և Սոսու խնդիրներն ի տնօրինութիւն», 1867 թվականի հետրվարին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաճությամբ կազմվում է եկեղեցական մասնաժողով, որը պատրաստում է վեց հոգվածներից բաղկացած մի կանոնադրություն Սոս և Աղթամարի Կաթողիկոսությանց վերաբերյալ և ներկայացնում է Վեհի ուշադրությանը: Գևորգ Դ-ն իր կարգին կանոնագիրը հանձնում է պատրիարքին՝ ի գործադրություն:

Ահա այդ կանոնադրությունը.

1. Կաթողիկոսունք Սոսու և Աղթամարայ նորին ի վիճականոց իւրեանց և յրնդհանուր ժողովոյն Կոստանդնուպոլսու, յորմէ առաջարկին առ Վեհափառ Կաթողիկոսն Ամենայն Հայոց ի վատեցումն և հաստատութիւն:

Արդին ի ցեղէ Աջապահեանց Սոսու բարձեալ է ընտրութիւն կաթողիկոսական՝ ընդհանուր հաւանութեամբ Ազգին, արժանաւորաց և եթ սեպահական ելով զայն»:

2. Կաթողիկոսունքն Սոսու և Աղթամարայ զօծումն կարողիկոսական բնդումին ի ձեռաց Վեհափառ Կաթողիկոսին Ամենայն Հայոց ի Ս. Էջմիածին:

Արդին ի սմին օրինակի Աղուանից, Վրաց և Սոսուց կաթողիկոսունք ձեռնադրէին ի սրբազն յաջորդէ կուսաւորչին Հայաստանեայց:

3. Կաթողիկոսունք Սոսու և Աղթամարայ ըստ բազմամեայն սովորութեան կարող են

* Շարունակված էջմիածին ամսագրի 1959 թվականի Հ-թ հ-ից:

ձեռնադրել եպիսկոպոս, ընդունելով յառաջագոյն զգաւոր հաւանութիւն Հայրապետին Ամենայն Հայոց»:

Զեռնադրեալ եպիսկոպոսունք ըստ թուոյ թեմից վիճակի իրեանց միայն պարսի լինիլ, զոր և պարտ է որոշել և սահմանել:

4. Կաթողիկոսունքն Սսոյ և Աղթամարայ պարտին յիշել ի սուրբ պատարագի զանոն Վեհափառ Կարողիկոսին Ամենայն Հայոց, իսկ եպիսկոպոսունք, վարդապետք և քահանայի Սսոյ և Աղթամարայ պարտին նախ յիշատակել զանոն Վեհափառ Կարողիկոսին Ամենայն Հայոց և յետոյ զանոն Կաթողիկոսի վիճակի:

5. Վեհափառ Կաթողիկոսի Սրբոյ էջմիածնի միան է սեպհական ստորագրել Կարողիկոս Ամենայն Հայոց, իսկ Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսաց կրնդակաց վերտառութիւնն իննելոց է Կարողիկոս Տաճն Կիլիկիոյ, Կարողիկոս Տաճն Աղթամարայ, իսկ ստորագրութիւն նոցա Կարողիկոս Սսոյ, Կարողիկոս Աղթամարայ:

6. Ի կրօնական դժուարին խնդիրս կաթողիկոսունք Սսոյ և Աղթամարայ պարտին զվերջին որոշումն ընդունիլ յրեղանրական Հայրապետէ անտի Սրբոյ Եկեղեցայն Հայատանեայց»:

Սսի և Աղթամարի համար կազմված այս կանոնադրության առիթով Բարգեն կաթողիկոսը անում է հետևյալ ճիշտ խորհրդածությունը.

«Ամենեն հաւամար առիթն էր ասիկա ազգային Պատրիարքարանի համար, որ կորուվ գործեր, հեցած սահմանադրության, և ցուց տար Թուրքիո հայոց մեջ գոյություն ունեցող Աթոռներուն. թե այլևս կարելի չէր հին մտայնությամբ և կերպերով գործել»:

1866 թվականի հուլիսին Սսի միարան և Հալեպի առաջնորդ Նիկողայոս եպիսկոպոս, Կիրակոս Աջապահանի մահից հետո, հափրշտակում է Սսի Աթոռը և ռգիշերայն, գողունի», օծվում է նույն Աթոռի Հարություն եպիսկոպոսից, որը հետագայում մահմեղականություն է ընդունում:

1865 թվականին Կիրակոս Բ-ի վախճանումից հետո կիլիկեցիք բաժանվում են երկու կուսակցությանց, որոնցից մեկը, հին սովորությամբ, առանց Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի գիտության, օժանդակում է Նիկողայոս եպիսկոպոսի կաթողիկոսական Աթոռի հափշտակմանը, իսկ մյուս մասը պաշտպանում է Սսի նոր կաթողիկոսի ընտրության հարցը՝ Պատրիարքարանի ազգային իշխանության ներքո, Կիլիկյան թեմի վիճակայինների մասնակցությամբ, օրինականության սահմանի մեջ:

Պատրիարքարանը չի ընդունում Նիկողայոսի կաթողիկոսացումը և Պողոս պատրիար-

քը 1866 թվականի վերջերին նրան կառավարության միջոցով բերել է տալիս Կոստանդնուպոլիս Երկու տարի վերջ Նիկողայուս վերադառնում է Սիս, ուր հանգիստ չի մնում ու նորից 1871 թվականի օգոստոսին, կառավարական հակողության տակ, բերվում է Կոստանդնուպոլիս և աքսորվում Արմաշի վանքը, իսկ ազգային իշխանությունը և Պատրիարքարանը ձեռնարկում են Սսի նոր կաթողիկոսի լմատության՝ «ժողովրդային բվենվ»:

Կոստանդնուպոլսի ազգային ընդհանուր ժողովի 1870 թվականի Բ, Գ, Դ, Ե, Զ և է նիստերում, Կոստանդնուպոլսի պատրիարքի նախագահության տակ, հանգամանորեն քննվում են Ամենայն Հայոց Հայրապետի գերագահության հարցը, Սսի և Աղթամարի կաթողիկոսների ընտրության եղանակն ու իրավասության սահմանները, ինչպես նաև Պատրիարքարանի մասնակցության հարցը Սսի և Աղթամարի կաթողիկոսների ընտրության, ըստ Հայ Եկեղեցու ավանդության: Այս հարցի առթիվ Ազգային ընդհանուր ժողովին ներկայացվում են չորս առաջարկներ, որոնք հետո վերածվում են մեկ առաջարկի:

«Ա. էջմիածնի Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդն է, և գերագահություն ու ամբողջ Հայաստանյայց Ս. Եկեղեցվոր կառավարության իրավասությունը անորն է, իսկ Աղթամարա և Սսոյ թեմական կաթողիկոսներն եկեղեցական անիշխանութենեն ծագած են և ապօրինակոր, բայց որովհետև զանազան պատճառաց համար չեն կրնար չնշվիլ, ուստի որպեսզի Ս. էջմիածնի Աթոռուցն զերագահությունը ու իրավասությունը անարատ պահպի, Ազգային ժողովն, որ թուրքիարնակ միայն Ս. էջմիածնի թեմական հայոց ներկայացուցիչն է, պետք չէ անոնց ընտրության մասնակի, զի այս մասնակցությունը Ս. էջմիածնեն հրաժարում կնշանակե. այս պետք է կամ Աղթամարա և Սսոյ թեմականք զատ-զատ երկերկու ընտրելի պատրաստեն, և անոնց մեջեն մեկ անձ Աղթամարա և մեկ անձ Սսոյ կաթողիկոս հաստատե. Ս. էջմիածնա Հայրապետը, և անոնց առանձնաշնորհության պայմաններ դնե, և կամ պետք է բոլորովին թողով, որ թեմականք, ըստ նին սովորության, իրենց ուղած անձն ընտրեն իրենց առաջնորդ կամ կաթողիկոս (Էջմիրլյան 792—793):

Ազգային ընդհանուր ժողովում Գրիգոր Օտյանը խոսք առնելով, անում է երկրորդ առաջարկը: Նա իր արտասանած հանրաժանութ ճառում ասում է.

«Ի՞նչ է այս Սսոյ կաթողիկոսության խնդիրը, ի՞նչ է իր նշանակությունը, տա-

րածումը, հետևանքները: Զայս իմանալու համար տեսնենք նախ, թե ի՞նչ է էջմիածնա կաթողիկոսությունը: Էջմիածնա Կարպաղիկոսուրյունը, նամայն Ազգին, թե՝ ի թուրքիա, թե՝ ի Ռուսիա, Պարսկաստան, Հնդկաստան և մինչև ի ծագս աշխարհի, ուր հայ մը կա, բոլոր հայերուն կարողիկոսն է ու հոգեուր զուլիք: Այս է էջմիածնա կաթողիկոսը, և ես ուզողներեն եմ ու ամենքս կուրքնք, որ այսպես մնա: Ո՞չ թէ էջմիածնա քաղքին հարյալ եմ. ես կկարծեմ, թէ ո՞չ երբեք քաղքի մը պետք է հարիլ... Բայց մեծ և ազգային պատճառ մը կա էջմիածնա հարելու համար. էջմիածնա կաթողիկոսը միմիայն հոգեոր Գլուխն է, որ Ռուսիո հայերը միացուցած է և կրնա միացնել Թուրքիո հայերուն հետ: Եթե էջմիածնա կաթողիկոսը մեր ալ կաթողիկոսը լրվա, Ազգին երկու մեծ հատվածները կրածնվին իրարմեա:

«Հիմա տեսնենք, թե ի՞նչ է Սոս կաթողիկոսը... Սոս կաթողիկոսը ուրիշ բան չէ, այլ էջմիածնա կաթողիկոսին հակառակարուն է: Թող ուրանա ո՞վ որ կուզե՞ իր այս հատկուրյունը. պատմությունը բարձրածայն հոչակե զայն: Հակառակաթոռ, ուրեմն ապստամք է... անպատվություն մը Ազգին ու Եկեղեցվույն. ուրեմն պետք է վերցնել զայն:»

«Չէ», պետք է պահել Սոս կաթողիկոսությունը, և գիտե՞ք ինչու համար.— Էջմիածնա կաթողիկոսության համար: Եթե Սոս կաթողիկոսությունը վերցնես, մեծ վնաս հհասցնես էջմիածնա կաթողիկոսության:»

«...Սոս կաթողիկոսը պետք է մնա իրեւ կաթողիկոս, այլ որշափ կարելի է պետք է վերն հիրք հակառակաթոռ: Ոչ միայն վասն զի գայթակղություն ու անպատվություն մըն է, այլև վասն զի օր մը վտանգավոր կրնա լլլալ, եթե էջմիածնեն ու նույնիսկ Թուրքիո մեջ Կեդրոնական Վարչովենեն անկախ կերպով կատարվելով իր ընտրությունը, բոլորովին Ազգեն անշատ մարմին մը կազմե:»

«...Ահա վտանգը. այս վտանգին առշմն առնելու բնական միջոցն է էջմիածնա կաթողիկոսի վավերացմանը դիմել: Բայց... Այդ արդյունքը, ինչպես նաև իրեւ հակառակաթոռ վերցնելու արդյունքը, երկուր մեկտեղ ձեռք բերելու միջոցն ըստ իս Քաղաքական ժողովու առաջարկությունն է, մեր

3. Սամանադրական ուրումնը 1866-ական թվականներն պարմանական ձևով էր պաշտպանում Օտտանի բանաձեռք Սոս գիրքի մասին, այն է Սիսը հարկադր է էջմիածնը պահելու համար իսկ այսօր տեսնում ենք նիշտ հակառակը՝ Անթիմիասը պաշտպանում է էջմիածնը բանդել փորձելու համար:

կարծիքն է, այն է որ ընդհանուր ժողովն ընտրե կամ մասնակցի Սոս կաթողիկոսին ընդհանուր բնույն է, իրեն զուլու ունենալով Ս. պատրիարքը, որ էջմիածնա վեհափառ կաթողիկոսի փոխանուրն է, կրնտրե Սոս կաթողիկոսը, անուղղակի կերպով կմիանանա ընդհանուր Եկեղեցվույն հետ, և ո՞չ ևս կկազմե կամ կրնա կազմել ապագային մեջ անցատ մարմին մը» (Իզմիրլյան 806—821):

Ազգային ընդհանուր ժողովում Ստեփան Փափազյանը նույն հարցի մասին արտահայովում է հետեւյալ կերպ.

«Հայոց Ազգին և Հայաստանյաց Ս. Եկեղեցվույն հոգեուր լինեանուու տեսուչն և Հայրապետը Սուտր Էջմիածնի կարողիկոսն է, որ պետք է վարե յուր պաշտոնը գործակցությամբ համայն Ազգեն ընտրյալ Ազգային Սյունենդուսի մը: Իսկ Աղթամար և Սիս մասնակուր կաթողիկոսությունը միայն են, որոնց լինեանուու տեսուչն և Եյուռոն օրհնել, և որք Ազգային Սյունենդուս չեն կրնար ունենալ, և պետք է որ պահեն իրենց կաթողիկոսական հաջորդությունն, և իրը բարձրաստիճանակորներ պետք է որ Ազգային ժողովը մասնակցությամբն ընտրվին. սակայն որպեսզի ազգային և Եկեղեցական միութենեն ու ամբողջութենեն բաժանեալ իրը զատ գովաներ զատ մարմին լրվան, զանոնք թե՛ կրոնապես և թե՛ քաղաքականապես պետք է Կոստանդնոպալյուս պատրիարքին իշխանությանը ենթարկել իրը պետք Թուրքիո բոլոր հայոց և իրը փոխանորդի Ս. Էջմիածնի Ընդհանրական Կաթողիկոսին, միանգամայն և անոնց Կոստանդնուպոլիս պատրիարքին և Աղթամարա ու Սոս թեմական առաջնորդությանց հետ ունենալիք հարաբերությանց կամ պաշտոնավարության եղանակը պետք է ճշտել և սահմանել:

«...Սոս և Աղթամարա կաթողիկոսաց ընտրությունը իրենց թեմականներուն թողոնք և մենք էջմիածնականք ամենակին շմիշամտենք ըսկելը, ազգային միության և ամբողջության կապը իզեկու և ցիրուցան աղու երեք գլուխներով երեք մարմիններու բաժնելու դրության առաջնորդել է:»

«...Ուստի հանուն Ազգին միության կինդրիմ, մեկդի դրեք խարությունները, ... ճանշելու համար մեկ Ազգ, մեկ Եկեղեցի Հայատանեյաց, և մեկ Եկեղեցական բարձր վարչություն համօրեն Ազգեն ընտրյալ, ազատ՝ քաղաքական ամեն նկատումներե և մնչումներե:»

«...Մեզի համար Սոս կաթողիկոս վանահայրը պիտի բնարվի, և պետք է, որ ընտրվի,

ինչպես կընտրվի Երուսաղեմա պատրիարք հայրը: Ահա խնդրույն լուծման բնական միշտը. ասկէ զատ ինչ որ ալ ընմեր, Եկեղեցվոր վնաս է, Ազգին վնաս, Բնդհանրական Կաթողիկոսության վնաս»:

«Կոստանդնուպոլսո պատրիարքը բոլոր թուրքիո հայոց պետն է, Ս. էջմիածնի Ընդհանրական Կաթողիկոսին փոխանորդը, կրոնական խնդիրները թուրքիո հայոց մեջ, իրենց վերջին լուծումը Կոստանդնուպոլսո համագումար ժողովին մեջ կդատնեն, կամ թե որ ասի անձեռնհաս ըլլա, Ս. էջմիածնի Մայր Աթոռին մեջ: Կտեսնե՞ք որ Թուրքաստանի մեջ Սսո Կաթողիկոս, Աղթամար կաթողիկոս, ըստ սահմանադրության արդեն վանական կամ անվանական կաթողիկոսի կարգն անցած են, մինչև անգամ կրնամ համարձակապես ըսել, թե եթե Թուրքաստանի մեջ կրոնական ժողովը մ' ըլլա և Սսո ու Աղթամարա կաթողիկոս վանահայրերն ալ անոր երկու կողմը: Ահա մենք այսլամի կատարեալ կերպով կրմրոնենք Եկեղեցվոր և Ազգի միությունը» (հզմիրլան 823—831):

1860-ական թվականի մեր սահմանադրական սերնդի կարկառուն դեմքերից մեկի՝ Նահապեա Ռուսինյանի առաջարկությամբ, Ազգային ընդհանուր ժողովը, երկար վիճարանություններից, մտքիրի աշխույժ փոխանակություններից հետո, զբանում է վերջնական, սահմանադրական լուծումը Սսո և Աղթամարի կաթողիկոսների ընտրության եղանակի:

«Հետին վիճարանությունները մե՛կ բանի մը ծառայեցին, մեկ կետ մը ամրացուցին ավելի սաստիկ և տիեզերական կերպով զորն որ ուրացող չկար. պայծառ տեսնվեցավ, թե Արարայան Աթոռը Ազգին Հովական Մայր և Գերագույն Աթոռն է, և անկե վեր Աթոռ շկա Հայաստանյայց Եկեղեցվոր մեջ, և անոր մանկանց համար:

...Ուստի այս կետը իսպառ ի բաց հանելով խնդրին մեջն, այսինքն Արարայը մեկդի առնելով, կուգամ իսկույն Սսո և Աղթամարա աթողությաց պարզապես ընտրությանը»:

«...Ընտրողի մը համար առաջին գիտնալու և որոշելու կետը սա է, թե ինչ ընտրելին և ինչ պաշտոնի մեջ պիտի գործածվի ընտրությունը. հոս ինձի կըսեն, թե կաթողիկոս է ընտրելիդ և կաթողիկոսություն պիտի ընե, թայց ինձ պիտի գիտնալ, թե ի՞նչ է այդ պաշտոնը: Երբ բառին նայիմ՝ ընդհա-

նուր Գայրապետություն կնշանակե. իսկ երբ պաշտոնը զննեմ, մասնավոր հովվապետություն կցուցնե...

Ի՞նչ է հապա կաթողիկոսին բուն պաշտոնը և այն ստորոգելիքը, որք առանձնապես միայն իրեն հատուկ են: Հոգևորապես նկատելով ըսկեցավ, թե Մեռոն կօրնեն, եպիսկոպոս կձեռնազրե, բայց այդ իշխանությունը միայն իրենը չէ, բանի մը եպիսկոպոս միաբանյալ ամեն ուր որ և որքան որ ուզեն կօրնեն ու կձեռնազրեն, ո՞վ պիտի արգիլե երբ Եկեղեցին կների...

«Մեզի պիտք եղածը կաթողիկոսության պաշտոնին այն մասն է, զոր սոսկ աշխարհական շրսելու համար՝ խառն պիտի ըսեմ, կամ լավ ևս Ազգային մասը, այն գերագույն իշխանությունը, որով կնախագահն հայ ժողովուրդին հովվական կառավարությանը վրա, այսինքն առաջնորդությանց վրա, զի ի՞նչ է կաթողիկոսը այսու նկատմամբ՝ եթե ոչ առաջնորդաց առաջինը, հպիսկոպոսաց Եպիսկոպոսապետը, հովվապետաց Մայրագույնը, Եկեղեցական վարչության Գրու և Հետևաբար ընդհանուր ազգին նոգեռական Գերագույն Պետքը...

Ուստի կհետեցնեմ, թե՛ ըստ Սուրբ Գրոց, թե՛ ըստ իրավաբանական և թե՛ ըստ տրամաբանական ամենայն օրինաց, Արարայան Աքոռ Գահակալը Ամենայն Հայոց նշմարիտ և աստվածքների Կաթողիկոսն է. որովհետեւ ամենայն հայոց բազմության ձայնով է ընտրյալ և յոր այս գերագույն իշխանությունը ժողովուրդին հանձնված է իրեն. ահա այս իշխանությունն է իր առանձին ստորագելիքը և իր հատուկ պաշտոնը...

Արդ, հիմա լավ զիտեմ, թե ինչ է կաթողիկոսությունը, անոր առանձին ստորոգելիքը, և անոր հատուկ պաշտոնը, նաև լավ ևս զիտեմ, թե իմ ընտրելիս թեպետ կաթողիկոս անունը կըրե, բայց իսկական կաթողիկոս չէ՝ բառին ամենայն ուժովը, այլ մասնավոր հովվապետ մը, զավառական առաջնորդ մը, կամ ավելի ճիշտ՝ նահանգի մը պատրիարքը, Երուսաղեմա պատրիարքին նման, զի ան ալ ասոր պես ցկյանս գահակալելու համար պիտի ընտրվի»:

«Կըսեմ ուրեմն... ևս սա կպնդեմ և խրնդիրն ալ սա է. «ընտրության իրավունքը տեղացլոցն է, վավերացման իրավունքը կեդրունի է» (հզմիրլան 835—842):

Խրիմյան պատրիարքի նախագահությամբ, Ազգային ընդհանուր ժողովը, քվեից բացարձակ մեծամասնությամբ, թնդունում է Ռուսինյանի առաջարկությունը: Այս առիթով իզմիրլան Սրբազն խորհրդածում է.

«Ազգային ժողովը սուլը այս որոշման անվրեպ հետևությունն է, թե Հայաստան-

յայր Առաքելական Ս. Եկեղեցին կառավարության միակ գերագույն Գլուխն և ամերության միակ գերագույն Պայտագալիք և Սայրագույն Պատրիարք Կարողիկասը Ս. Եղիահանի Մայր Աթոռու Գանակալն է: Իսկ Աղթամար և Սոս վանահայր Վիճակավորներու Միաբն եպիսկոպոս ձեռնադրելու և Մյուտոն օրնելու լոկ հոգիոր առավելությամբ Աղթամար և Սոս վանուց վանահայր առաջնորդներն կամ վիճակավորներն են՝ ընդ իրավասությամբ Կոստանդնուպոլսու պատրիարք և Հայրապետական փոխանորդ արքապիսոսին, որ որոշմամբ Ազգային կեղործական վարչության կավերացնե անոնց ընտրությունն և ձեռնադրության և օժման կատարումը հանճնարարե:

Ազգային ժողովու այս որոշման ուժովն է աճա, որ մենք ևս մեր սույն գործույն ընթացքին մեջ անոնց համար վանահայր Վիճակալոր անոնը գործածեցինք:

...Կոստանդնուպոլսու պատրիարքությունը, նույնպես ալ Աղթամար և Սոս Կաթողիկոսությունները ժամանակու ծնած է, և ոչ թե Եկեղեցին, և ժամանակու պիտի կարգադրե, ինչպես կըսե Կաթողիկոսական հանճնարողով, զոր հարկ համարիմ վերստին օրինակել աստ, որ աճա».

«Մեր Ազգային Եկեղեցին նվիրապետության կարող կապահենք, որ ՀԱՅԱՍՏԱՆ-ՑԱՀԱՅ Եկեղեցը ՊԱՐԵՏՈՆԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒԽ ՀՈՎՎԱՐԵՑԸ ՄԵԿ ԸԼԱԱ, որ Այենքան Հայոց Կաթողիկոսության տիտղոսը կերե և Սայրագույն Հայրապետության նվիրական պաշտոնը կվարե: Այս հրավամը, մեր Եկեղեցի վու մեջ այսօր Երեք Կաթողիկոսական Արքու մենասե գովակիու ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ Մ' է ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ ՆԿԱՏՄԱՄԲ, և հավաստի է, որ Եթե այսօր Հայաստանյաց Եկեղեցին մեջ մեկ կաթողիկոս կեցած ատեն որիշ մ' ալ ոտիշ տեղ հաստատելու խնդիր երևան եներ, ամեն ազգասեր և Եկեղեցին բարեկարգության նախանձախղի ազգայինք դեմ կկենային անոր հաստատությանը» (Խմբիրլան 844—852):

Ազգային ընդհանուր ժողովի որոշման համաձայն, 1871 թվականին Պատրիարքարանը ձեռնարկում է Կիլիկիո Կաթողիկոսական ընտրության: Սեպտեմբերին Առանալում կազմվում է գավառական ընտրական ժողովի Կոստանդնուպոլսի Քաղաքական ժողովի: Հրահանգով, որին հանուն Կենտրոնական վարչության մասնակցում են Սիմեոն եպիսկոպոսը և Ֆրենկյան Հովհաննեսը: Ընտրական ժողովը գումարվում է հոկտեմբերին և Սոյի Կաթողիկոս է ընտրվում Բերիայի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Քեֆսիկյանը: Ազգային ընդհանուր ժողովը այ-

նուհետեւ կազմում է մի հանձնաժողով, որը մշակում է 7 հողմածներից բաղկացած հետևյալ ծրագիրը՝ «Մրագիր հարաբերության կիլիկիո կաթողիկոսական վիճակին ընդ Ազգային կեդրոնական վարչության» անունով:

«1. Կիլիկիո վիճակը իրեւ մասն ամբողջության թուրքաստանի հայոց առաջնորդական վիճակը, ենթակա է Ազգային Սահմանադրության տրամադրությանց, և Ազգային կեդրոնական վարչության տնօրինությանց:

2. Տանն Կիլիկիո կաթողիկոսը իրեւ նույն վիճակի թեմական առաջնորդաց գումար հարաբերություն ունի Կեդրոնական վարչության և Կիլիկիո վիճակաց առաջնորդաց հետ:

3. Կիլիկիո վիճակաց առաջնորդներն հարաբերություն ունին Կիլիկիո կաթողիկոսին հետ, և իրենց ձեռնասութենեն վեր խնդրոց համար Կեդրոնական վարչության կդիմե, համարատու մնալով անոր կդիմեն:

4. Կիլիկիո կաթողիկոսը իր տնօրեն ժողովով կտնօրինե իրեն եկած վիճակային խնդիրները, և իր ձեռնասութենեն վեր (անշոշտ ինչպես քաղաքական նույնպես և կրոնական) խնդրոց համար Կեդրոնական վարչության կդիմե, համարատու մնալով անոր:

5. Կիլիկիո վիճակաց առաջնորդները իրենց տեղական կառավարության և Կիլիկիո կաթողիկոսը նույն վիճակաց տեղական կառավարությանց քով միջնորդ են Ազգին և անոնց մեջ:

Իսկ Բարձրագույն դրան հետ հարաբերություն ենթագրող ամեն գործոց համար պիտի գիմե առ Կեդրոնական վարչությունն:

6. Կիլիկիո վիճակաց առաջնորդներու ընտրությունը Սահմանադրության տրամադրությանց համեմատ կիսատարվի հար և նման թուրքիո վիճակաց առաջնորդներու ընտրության:

Բայց ընտրության հրահանգը Կեդրոնական վարչութենեն առ կաթողիկոսը և ընտրության տեղեկագիրն ալ կաթողիկոսին միջոցով առ Կեդրոնական վարչությունը կուղդըլի, որ վավերացվելեն ետքը Բարձրագույն դռնեն ֆերմանը կտանա և կորկե առ կաթողիկոսն, որ յուր օրնության կոնդակով կիսատարտե նորընտիր առաջնորդը:

7. Կիլիկիո կաթողիկոսը միայն Կիլիկիո վիճակաց համար պետք եղած Ս. Մյուտոնը կօրհնե և եպիսկոպոս կձեռնադրե:

Բայց ձեռնադրելի եպիսկոպոսին համար կանխավ Կեդրոնական վարչության հավանությունը կտանա (Խմբիրլան 886—890):

Ազգային Պատրիարքարանը Քեֆսիկյանի ընտրությունը հաստատելու համար պայ-

ժան դրավ, որ ռամենեն առաջ նորընտիր կաթողիկոսը խոստմնագրով մը ընդունի Ազգային ընդհանուր ժողովի ընելիք կարգադրությանը, Կիլիկիո Աթոռին և Ազգային Պատրիարքարանի Հարաբերությանց մասին, որպեսզի ճշտվի Կիլիկիո Աթոռին և Կոստանդնուպոլսի Ազգային Պատրիարքարանի հետ Հարաբերության կերպը, ուրիշ խոսքով, Ազգային Պատրիարքարանի և Մայր Աթոռի գերիշխանությունը Կիլիկիո Աթոռի վրա» (ԲԱԿ Պատմ. 715—716):

Ազգային կենտրոնական Վարչությունը իր 1872 թվի մարտ 10 թվակիր պաշտոնական նամակով Խրիմյան պատրիարքի և Թաղաքական ժողովի ատենապետ Ս. Ապրոյի և ատենադպիքի Տ. Ռ. Յուսությանի ստորագրությամբ, Սսի Կաթողիկոսական ընտրության մասին տեղեկագրում է Ամենայն Հայոց Հայրապետին, որ Ազգային վարչությունը և Կոստանդնուպոլսի Ազգային երեսփոխանական ժողովը եջմիածնի Մայր Աթոռի գերագահությունը պահպանելով, «Հայաստանյաց Ս. Եկեղեցու միության և միասնության սպառնացող վտանգին առջևն առած, Սսո անկախություն սպառնացող դիրքը օրինավոր սահմաններու տակ մտցնելով, ապագայն իսկ ապահովելու հաջողած է», որովհետև, ավելացնում է Գևորգ Դին ուղղված պաշտոնագիրը, «Երբ Կիլիկիո Կաթողիկոսն յուր խոստմնագիրը դրժե և սահմանելի հարաբերությունը ընդունի և կամ նոցա դեմ վարվի, անտարակույս, ամբատանության տակ կիյնա և ի պահանջել հարկին՝ մինչև անգամ կդադրի յուր պաշտոնեն» (Իզմիրլան. 941, 937):

Սսի նորընտիր կաթողիկոսը «պարտավոր էր լրջամիտ խոհականությամբ և իմաստուն հեռատեսությամբ վարել սկսիլ յուր պաշտոնն», (Իզմիրլան. 1070), այնինչ որպես հախուռն մարդ, «ի գերեւ հանեց համաձայնության ամեն փորձ» (ԲԱԿ Պատմ. 1219):

1871 թվի նոյեմբերին Խրիմյան պատրիարքի հանձնարարությամբ կատարվում է Քեֆսիզյանի օծումը Սսում:

«Քեֆսիզյան կաթողիկոսանակեն հետո դուրս տվավ իր գույնը, և իր կաթողիկոսության 23 տարիները նշանավոր լրավ կրությով արծաթասիրության հետ, իր ժողովուրդին հետ, Ազգային Պատրիարքարանի և հետեւարար Մայր Աթոռո դեմ:

Եվ այս անհմաստ կիլիմերու երեսեն չկրցավ կապվիլ Սսո Աթոռին, և այս պատճառով չկրցավ կազմակերպել միաբանություն, կաթողիկոսական դիվան, դպրոց, և ընդհակառակն, աստանդական կյանք մը վարեցւ առանց զգալու պատասխանատվության դույլն ծանրություն իր խղճին և գիտակցության մեջ» (ԲԱԿ Պատմ. 719):

Քեֆսիզյանն իր գործերով և անվարչագիտությամբ ժամանակի հեծանուն հոգևորականների հակառակությունը շահեց, վտանգեց Կիլիկյան Աթոռի կաթողիկոսական իրավասությունը և ատելի գարձրեց իր անձը: Հատկապես բուռն էր Գևորգ Դին, Կությունը Քեֆսիզյանի գեմ, այն աստիճան, որ նա Կիլիկյան Աթոռոր «հակաթոռ և հերձվածող» հոշակեց:

1872 թվականի հունվարի 23 թվակիր մի գրությամբ («Կիլիկյանը էսրարը վես սեֆալեթի» անուն հայատառ և տաճկաբարբառ տերապետ), Քեֆսիզյանը դուրս եկավ էջմիածնի դեմ և անվանարկեց Գևորգ Դին, «ինքը լինը Ո. Թադեոս և Բարթուղիմեոս առաքելոց և Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդ հայտարարեց» (Իզմիրլան. 1074):

Իզմիրլան սրբազն շատ ճիշտ կերպով բնութագրել է Քեֆսիզյանի կենտրոնախուզ ձգումներն ու գործունեությունը.

«Տ. Մկրտիչ սրբազն սույն այս հայտարարությամբ ինքը լին յուրովի Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդն եռչակելը թեև կեղծ ստորագրության ներքև ըլլալով ըստ ինքյան կարևորություն լունի, այլ սակայն սա անտարակուակի ճշմարտություն մ'է, թե Սսո վանահայր վիճակավորության թիմական մասնավոր պաշտոննեն Հայաստանյաց Ս. Եկեղեցու առաքելահաջորդ հայրապետական իշխանության բարձրանալու կամ Ամենայն Հայոց Հայրապետության հոգևոր իրավասութենեն և ընդհանրական տեսչութենեն ազատ և անկախ ըլլալու ձգումնեն յուր պաշտոնավարության առաջին օրերեն ունենալ հավակնած է, զոր արդ հայտնապես իրականացնել կճգնի առ ոտն կոխելով եկեղեցական պատմությունն ու կանոնները և Ազգային ժողովը որոշմունքը, որք բացարձակապես հակառակ են յուր ազգավանախորհուց ու ձգումանց» (Իզմիրլան. 1076—1077):

Քեֆսիզյան շուտով ընդհարվում է նաև Կոստանդնուպոլսի Ազգային կենտրոնական վարչության հետ, որն աշխատում էր Կարգ ու կանոն մտցնել Սսի կաթողիկոսական Աթոռից ներս, հատարակել հատուկ հրահանգ Կիլիկյան Աթոռի գիրքը և հարաբերությունները ճշտելով Ազգային կենտրոնական վարչության և Մայր Աթոռի հետ:

1873 թվականի հունիսի 11-ին Պատրիարքարանի կողմից պատրաստվում է «մասնավոր հրահանգ Կիլիկիո վիճակաց համար», ինչպես պատրաստվել էր նմանօրինակ մի սահմանադրական հրահանգ գավառների համար: 1874 թվականի հունիսի 24-ին, Վարժապետյանի օրով, Խառն ժողովից վավերացվում է այդ հրահանգը:

Ազգային վարչությունը մերժում է Քեֆսիդյանի հետևյալ շրջանակները.

1. Կաթողիկոսարքանի Սսից տեղափոխությունը Կիլիկյան մի այլ քաղաք:

2. Օսմանյան պետության կողմից որոշ մի ոռոճիկի սահմանում կաթողիկոսին:

3. Կիլիկյան թեմերի ընդարձակում:

4. Կիլիկիո Կաթողիկոսության թեմակալ առաջնորդությունից ավելի արտօնությունների արվելը կառավարության կողմից:

1880 թվականի հոկտեմբերին Քեֆսիդյան Սսում հրավիրում է Կիլիկյան թեմերի թեմական խորհուրդ՝ քննելու ներսես պատրիարք Վարժապետյանի այս մասին գրած պաշտոնագիրը: Նոյեմբերին նա հասնում է Կոստանդնուպոլիս և պատրիարքին է ներկայացնում: Սսի թեմական ժողովի պաշտոնագիրը, ուր թեմական ընդհանուր ժողովը իր խորհուրդները և ցավերը հանուր Ազգին ներկայացնելով, նրա ներկայացուցիլ պատկանելի հայոց խնամակալ և պաշտպան Վարչությունից խնդրում էր «փրկել զմեզ ի ցատց մերց»:

Պաշտոնագրում խոսվում էր Սսի Աթոռի «արդի ավերյալ վիճակ»-ի մասին և մի շարք առաջարկներ էին արվում «ազգասիրական ոգով» արյուն ի սիրու և արտասավալից աշոք» Սսի Աթոռը վերականգնելու համար: Վարժապետյան պատրիարքի հանձնարարությամբ ալդ պաշտոնագիրը քննվում է Կրոնական ասուանի կողմից: Կրոնական ատյանը Սսի թեմական ժողովի պաշտոնագիրը քննելուց հետո պատասխում է մի տեղեկագիր, ինչպես նաև պայմանագիր և ներկայացնում է պատրիարքին վավերացման:

Ներսես պատրիարքը այս պայմանագիրը ներկայացնում է Քեֆսիդյանին, Մատթեոս հայիսկոպոս իզմիրյանի և Կարապետ հայիսկոպոս Սերովյանի միջոցով, խնդրելով, որ «քաղցրությամբ լսե զանոնք»:

Ահա այդ պայմանագիրը:

«Ա. Հոգեմոր հանգանդութիւն առ Հայրապետն Ամենայն Հայոց՝ Գահակալ Մայր Աթոռոյ Ս. էջմիածնի, որ է օրինաւոր յաշորդ Սրբոց Առաքելոց Թագէի և Բարթուլիմեայ, և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի կուսաւորշին, և Վեհափառ Կաթողիկոս Ամենապատի Սահմանական Հայոց ընդ աշխարհ համօրէն:

Բ. Ի ժամանակ պատարագի և յաղօթս ժամերգութեան յիշատակել նախ զանուն Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց, ապա զանուն Ամենապատի Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ: Այս յիշատակութիւն պարտի լինել Ամենապատի Կաթողիկոսէն Կիլիկիոյ և ի թեմականաց նորա:

Գ. Զեռնադրել եաիսկոպոս միայն զառաջնորդս թեմական վիճակացն Տանն Կիլիկիոյ, առնելով կանխաւ զգացաւութիւն ամե-

նապատիւ Ս. պատրիարքին Կոստանդնուպոլսոյ և Ազգային կեղունական վարչութեան:

Դ. Զհանել զեկեղեցականս վիճակացն Կիլիկիոյ անդր քան զսահմանս Կիլիկիոյ ի պաշտպանութիւն, առանց կանխաւ առնելոյ զհանութիւն ամենապատիւ Ս. պատրիարքին Կոստանդնուպոլսոյ և Ազգային կեղունական վարչութեան:

Ե. Զսուրբ Միունն օրհնել միայն վասն Տանն Կիլիկիոյ և վիճակացն նորին, և շառաքել նուրիակս ի բաշխումն Ս. Միուննի ի վիճակս որ են արտաքոյ սահմանացն Կաթողիկոսութեանն Տանն Կիլիկիոյ, առանց գրաւոր հաճութեան ամենապատիւ Ս. պատրիարքին Կոստանդնուպոլսոյ յանուն վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց:

Զ. Ամենապատիւ կաթողիկոսն Տանն Կիլիկիոյ պարտի գրել յամենայն վերնագիրս կոնդակացն, և ստորագրել յամենայն գրութիւնս, (այս անուն) Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ:

Ի Կոստանդնուպոլիս, յԱզգային Պատրիարքարանի հայոց, յամի Տեան 1880, ի 10 դեկտեմբերի ամսոյ և յԱզգային բուականք ԲՑ:

Զվերոգրեալ վեցեսին հոդվածս պայմանագրոյ յանուն Կաթողիկոսութեանն Տանն Կիլիկիոյ ընդունեմ սրտի մտօք և խոստանամ գործադրել ընդ բովանդակ կեանս իմ» (Իզմիրլան 1177—1180):

Վարժապետայանն այս պայմանագրին կից իր ուկտեմբեր 11 թվակիր նամակում գրում էր Քեֆսիդյանին:

«Առ Ամենապատիւ Տէր Մկրտիլ Սրբազն Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, սիրելի եղբայր իմ ի Տէր:

Յայտնելով աստանոր զի համաձայն ևմ բոլորպիմը վճռոյ Կրօնական ատենին վասն միութեան Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ, և խնդրեմ ի նորին Սրբազնութենէ, բարեհաճիլ ստորագրել զվեցեսին պայմանս ծրարեալս ընդ սմին և ի բաց թողով զգործածութիւն մանուշակագոյն վեղարի, և տարականոն ստորագրութեան» (Իզմիրլան 1882):

Քեֆսիդյանը մերժում է և՛ պայմանագիրը և՛ նամակը և սկսում գործել ինքնագլուխ, մինչ սիրեն կմնար գործակցիլ Ազգային Պատրիարքարանի..., օգտվիլ անոր յութեական և բարոյական օժանդակութենեն ի նպաստ իր Աթոռին շինության և բարեկարգության...: Այս է պատճառը, որ Քեֆսիդյանի 23-ամյա Կաթողիկոսութենեն ոչ մեկ հրատակ՝ Աթոռի շինության և բարեկարգության վերաբերյալ գործերու մեջ: Խոսքի մարդ, ցուցի մարդ:

Կազմակերպելու Կարողություն շուներ և հավակներ Կիլիկիոյ Աթոռին կապերը խզել

Մայր Աթոռի և Ազգային Պատրիարքարանի հիմունքը (ԲԱԿ Պատմ. 728—729):

Քեֆսիզյանը փորձել է հափշտակել Մայր Աթոռի թեմերու Այդ մասին է վկայում Մակար կաթողիկոսի կոնդակը ժամանակի Կոստանդնոպոլսի պատրիարք Հարություն Վեհապետանին ուղղաւ:

«Վեհաշնորհ պատրիարքին Հայոց Կոստանդնոպոլսոյ Բարձրապատիւ Սրբազն Յարութիւն Արքական կոպուսի եղոր մերում սիրեցելուց ի Տէր ծանուցանեմք:

Յօրէ ամբառնալոյ մեր ի Գաջ Հայրապետութեան Ամենայն Հայոց շան և հոգ մեր եղեալ է յամենայն դէպս ի բաց բառնալ ի միջոց զվնասարեր զայն խտրութիւն, որ յոշ բազում ժամանակաց հետէ յերեսաց անշչող հանգամանաց ժամանակիս յառաջացեալ է ի մէջ կաթողիկոսացն Մեծի Առաքելական Աթոռոյս և Տանն Կիլիկիոյ և Աղթամարայ և ընդ այնք շանացեալ եմք ըստ Յիսուսանդ օրինաց քրիստոսական Եկեղեցւոյ հաստատել ի նոսա զիրալիր յարարերութիւնս առ միմենան ի շինութիւն Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ և Ազգի, և այսու իսկ բարեմիտ դիտաւորութեամբ յերդմանագրի անդ նորապակ եպիսկոպոսացն վանիցն Սուրբ Յակովայ, որ յերւուաղէմ Մամբրէի և Սահակայ ի բաց հանաւ զհաստուածն, որ պարտարէր զնոսա համարիլ Հակաթոռու Հայրապետութեան մեծի Աթոռոյս զարբազն կաթողիկոսուն Կիլիկիոյ և Աղթամարայ: Այլ արդ ցաւօք սրտի լսեմք, թէ յաւորս յայսուիկ սրբազն կաթողիկոսն Տանն Կիլիկիոյ ի վեր քան զիրաւուն սահմանափակ իշխանութեան իւրոյ զմի ոմն յեպիսկոպոսաց իւրոյ Մկրտիչ անոնն առաքեալ է ի Կալկաթայանուն նուիրակութեան, այլ ներքին դիտաւորութիւն առաքողին և առաքելոյն այդորիկ է իր մնալ անդանոր և շանահնար լինել զարծակցութեամբ ոմանց դարձուցանել և յանգուցանել զիրոս պարզամիտ ժողովրդեան ի հպատակութիւն Տանն Կիլիկիոյ: Արդ այսորիկ բանք թէպէտ իւրոյ ի լրոյ առ մեղ հասեալ՝ ոլ այնքան հաւատալի թուին մեզ, այլ որովհետեւ յայսպիսում անբարի ժամանակի մարթ է և այսպիսեաց զեղծմանց ակնկալել, վասն որոյ Զեզ, որ նախանձախնդիրդ էք իրաւանց և փառաց Ընդհանրական Աթոռոյս և աթոռակալաց նորին, ոլ աւելորդ համարիմ կանխաւ յիշեցուցանել ի զգուշութիւն, թէ վիճակ Կալկաթայի ի դարաւոր ժամանակաց հետէ նուիրագործեալ իրաւամբ համարեալ է ցայսօր և համարի մին ի սեպական վիճակացն Մայր Աթոռոյս Սրբոյ էջմիածնի լնդ առաջնորդական իրաւասութեամբ առաջնորդացն նսպահանու և Հնդկաստանի, որք միջտ նշանակեալք են ի կաթուղիկոսացն նախամեծար Սրբաւտեան Մայր Աթոռոյս և

բնակութիւն կալեալ ի սուրբ վանս Զուղայուն նուիրակը սորին մինչև յգերջին ժամանակու այսուիկ անպակաս եղեալ են ի հնդկահայուն, մինչդեռ Համարձակ մուտ գործել ի նոսա շամարիկ իրաւունս ու միայն նուիրակացն Կիլիկիոյ և Աղթամարայ, այլ նոցին իսկ կաթուղիկոսացն Աթոռաց այնոցիկ: Իսկ թէ այժմ սրբազն կաթողիկոսն Կիլիկիոյ յորպիսի պատճառանաց շարժեալ զտարօրինակս զայս յացեալ է զմորհուրդ՝ զարմանամ յոյժ: Զարմանամ նոյնակս և ընդ այն, թէ այսօրինակ տարականոն խորհուրդ և ձեռնարկութիւն սրբազն կաթողիկոսին Կիլիկիոյ զիարդ կարացեալ են խոսափիլ յաշալուրջ շրջահայեցողութենէ Զեր Սրբազնութեանդ և ազգախնամ ժողովականաց ատենից վարչութեան հայոց մայրաքաղաքիդ և եթէ իրազեկ լեալ է Զեր յարգոյ ժողովականացդ զայս դիտաւորութենէ և ձեռնարկութենէ կաթողիկոսին Կիլիկիոյ, զիարդ շէք փութացեալ զառաց առնուլ ապօրէն արարմանցն այնոցիկ կամ ծանուցեալ մեղ ի տեղեկութիւն և ի տնօրինութիւն:

Արդ այսու յանձն առնեմք բարձր Սրբազնութեանդ Զերովդ բնածին աշալուրջ հնկողութեամբ ի վերայ Հասանիլ ճշմարտութեան բանիցս առ մեղ հասելոց, և եթէ ստոյդ իցեն այնոքիկ, զկափեալ զքնչ զամենայն զհնարսամենայն խոհականութեամբ ի գործ զնել, զառաց առնուլ վնասակար դիտաւորութեանն այնորիկ, հրաւիրելով առ արդ և զողամիտուշագրութիւն վարչական մարմնոց մայրաքաղաքիդ և զհետեանացն փութալ ծանուցանել մեղ ի տնօրինութիւն:

Ողջ լերուք ի Տէր մեր»:

(Հայկական ՍՍՌ Պետ. մատենադարան. Կարողիկոսական դիվան, բրապանակ 246, վակերագիր 542):

Քեֆսիզյանը աստանդական վիճակում վախճանվում է Հայեպում 1894 թվականի նոյեմբերի 8-ին, Ամենայն Հայոց Հայրապետի և Հայ ժողովի նզովի տակ:

Քեֆսիզյանի մահից հիմունք Կաթողիկոսական Աթոռոր ութը տարի՝ 1894—1902 թվականներին թափուր է մնում: Այդ տարիների ընթացքում Ազգային վարչության որոշումով իրկու անգամ կաթողիկոսական ընտրություն է տեղի ունենում: 1895 թվականի հունիսի 7-ին առաջինը ընտրություն է Գրիգորիս եպիսկոպոս Ալեաթյանը, որի ընտրությունը սակայն հանդիպում է թուրք կառավարության ընդդիմությանը: Ալեաթյանի ընտրության դեմ բողոքում են նաև Սսի նիկողայոս Դավթյան և Հովհաննես Դավանցյան ու Արքահամ Մամիկոնյան եպիսկոպոսները, առարկելով, թէ «եղած ընտրությունը ընկալյալ կանոնաց և ափրոյ սովորությանց հակառակ է, իրը թէ ընտրության մեջ մասնակցություն ունե-

ցած-շէ Կիլիկիո Աթոռի եպիսկոպոսական ժողովը, Աթոռի հպիսկոպոսներեն չէ ընտրյալը, ինչպես որ սկիզբն ի վեր Աթոռի կանոնն եղած է» (ԲԱԿ Պատմ. 775):

Միաբանությունը բաժանվում է երկուական ու մանք պաշտպանում են ընտրության օրինակորությունը և սահմանադրականությունը:

Թուրք կառավարությունը, այդ բողոքագրի հիման վրա, բացատրություն է պահճանջում կոստանդնուպոլիսի Պատրիարքարանից: Պատրիարքարանը և Խառն ժողովը սահմանադրապես օրինական են համարում ընտրությունը:

Բողոքով եպիսկոպոսները, սակայն, ոտնաշարելով օրենքը, 1895 թվականի հունիսի 18-ին, իրենց միջից Հովհաննես Գաղանցյան եպիսկոպոսին ընտրում են կաթողիկոս և օծումը կատարում գաղտագողի կերպով: Այդ ապօրինի ընտրության դեմ բողոքում են միւս միաբանները՝ Կիրակոս Թեքմեզյան, Կարպետ Քեշեցյան և Միքայել Վեհապետյան եպիսկոպոսները:

Կոստանդնուպոլիսի Ազգային կենտրոնական վարչությունը նույն թվականի հունիսի 19-ին ժողովական որոշմամբ մերժում է Գաղանցյանի կաթողիկոսությունը և ըստ այնմ էլ կառավարության հաղորդում: Կառավարությունն էլ պարտավորված՝ չի ճանաչում Գաղանցյանի կաթողիկոսությունը և Պատրիարքարանի ազգու միջնորդությամբ նրան արտաքսում թերութ, 1897 թվականի մարտին: Բայց կառավարությունը չի վավերացնում նաև Ալեաթեցյանի ընտրությունը, որով Պատրիարքարանն ու կենտրոնական վարչությունը «դժվարին կացության մը առջև գտավ ինքինը»:

1899 թվականի օգոստոսի 15-ին Ալեաթեցյանը վախճանվում է և հարցը ըստ ինքյան փակվում: Վարչությունը որոշում է ձեռնարկել նոր ընտրության և որպես պատվիրակ Պատրիարքարանի և կենտրոնի Սիս ուղարկել երուաղեմի վանքի լուսարարապետ Խապահ արքապիսկոպոսին՝ նոր ընտրության նախագծին: 1900 թվականի փետրվարին Սահմակ արքեպիսկոպոս Խապահանը Աղանա է ժամանում, ինչ փետրվարի 14-ին Աղանայի կուսակալը, կենտրոնից ստացած գաղտնի հրահանգի համեմատ և Պատրիարքարանի պատվիրակի ներկայությունը անտեսելով, Սիս Աթոռի տեղապահ Թեքմեզյանին հրամայում է ընտրական ժողով գումարել և անմիջապես ընտրությունը կատարել: Տեղապահը չի կարողանում ընդդիմանալ և շրջարերական հրավիրագրեր է ուղարկում, մարտի 10-ին Աղանայում ընտրություն կատարելու համար: Թուրք կառավարության գրւխավոր նպատակն էր Կիլիկիո Աթոռը հակա-

լորել Կոստանդնուպոլիսի Պատրիարքությանը, Մյուս Կողմից Օրմանյան պատրիարքը և Վարչությունը հրամայում են Խապահանի՝ ընտրությունը կատարել օրենքի սահմանի մեջ և Պատրիարքարանի հրամանի համեմատ միայն գործել, առանց Պատրիարքարանի պատվիրակի՝ նախագահության ընտրություն չկատարել: Վարչությունը միաժամանակ բողոք է ներկայացնում կառավարության, «զի կենսական խնդիր էր Պատրիարքության ազգագետական դրությունը խախտել, հայ ազգությունը երկուքի բաժնել և Կիլիկիո համար նոր հայ ուղղություն մը կազմել, ինչ որ Քիֆիզյանի երազանքներեն մին իղած էր, բայց չէր հաջողած» (Օրմանյան): Այս ձեռվ հայ ազգությունը երկուքի կրածնվեր և Կիլիկիո համար նոր հայ ազգություն մը կկազմվեր» (ԲԱԿ Պատմ. 777):

Վարչության պատվիրակ Խապահան սրբագանը, 9 ամիս Կիլիկիա մնալուց հետո, 1900 թվականի նոյեմբերին Երուաղեմ էր վերադառնում, կաթողիկոսական ընտրություն կատարած: Ի վերջո, երկար բանակցություններից հետո, Պատրիարքարանը նորից զբաղվում է Սիսի կաթողիկոսության հարցով, Խապահանը նոյեմբերի 20-ին գրադիվել կաթողիկոսական ընտրությամբ: Նոյեմբերի 29-ին գումարվում է ընտրական ժողով, ուր ընտրվում է Գևորգ Երեցյանը: Սակայն Երեցյանը դեկտեմբերի 13-ին հրաժարվում է և Պատրիարքարանը 1902 թվականի հոկտեմբերին ձեռնարկում է նոր ընտրության: Պատրիարքարանը ստիպված «ընտրության ապարդյուն ելքը» հաղորդում է կառավարության և «նոր ընտրության համար թուլլատվություն խնդրում»:

1902 թվականի հոկտեմբերի 12-ին Աղանայի Ս. Աստվածածին եկեղեցում գումարվում է ընտրական ժողով՝ Վարչության և Պատրիարքարանի պատվիրակ Քյոմյուրճյան և Կիլիկիո կաթողիկոս է ընտրված Սահակ արքապիսկոպոս Խապահանը, այսպիսով վերջ է տրվում Կիլիկիո Աթոռի տագնապին, ոի մեծ խնդրություն և միսիթարություն բոլոր Կիլիկիցիներու, ըստնք նաև բոլոր հայերու, զի բովանդակ հայության սեեոյալ մտահոգությունը գամված էր Կիլիկիո Աթոռի խնդրին և Կիլիկիո ժողովորդի կացությանը» (Օրմ. Ազգ. Գ. 5139):

«Վարչությունը, ընտրական գործողությունները կանոնավոր գտնելով, հաստատում է Խապահանի ընտրությունը: Տիսկ Հրովարտակը Պատրիարքարան կհանձնվեր 16-ին, որուն մեջ հայտնի կերպով շեշտված էր հանգանդ ձեր Կիլիկիո Կաթողիկոսության կոստանդնուպոլիսի Պատրիարքության մեջ»

պարունակված ըլլալը, և միանգամ ընդմիջաներքված կըլլար՝ Կիլիկիո համար անշատ և ազատ Պատրիարքարան մը ստեղծելու թիգիլյանի հղացած տարադեպ նպատակը և հեռացած կըլլար տաճկահայ ազգությունը պառակտելու վտանգը» (Օրմ. Ազգ. Գ 5141—5143):

«Քեֆսիլյանի ետքը տառապած ժողովուրդը նոր զարթնում և նորոգություն կղգար ազգովին ընտրված, կեղոնին համակրված, կառավարութենեն փառավորված և հասարակութենեն փայտիայված կաթողիկոսի ներկայության», — գրում է Օրմանյանը:

Նորընտիր կաթողիկոսի օծումը կատարվում է 1903 թվականի ապրիլի 20-ին, Կանաչ կիրակի:

«Թե՛ օծման և թե՛ մյուսուօրինելի սուրբ պատարագներուն, զորս մատուց նորբեաթի Սահմակ կարողիկոս, իր հախողուները հիշել վերը, հիշեց նաև Ընդհանրական Հայրապետը, զՏԵՐ Միւրախի Խրիմյան կաթողիկոսն. թերւս 1441-են ի վեր առաջին անգամն էր, որ Կիլիկիո Մայր Արքունիք մեջ կիշշվեր Ազգին Ընդհանրական Հայրապետը: Պետք էին հիշեցի այս դեպքը, ցույց տալու համար, թե նորընտիր Սահմակ կարողիկոսը որքան փափագող էր սիրու և համերաշխուրքյան երկու Արքուներու: Այս արքիլ հարկ է հիշել նաև, որ Ընդհանրական Հայրապետն Խրիմյան Հայրիկ ապրիլ 10-են առաջ հենագործ շնորհավորած էր զեսրբաթիր կաթողիկոսն: Միւենուն ժամանակ Տրդատ Պալյան և Հմայակ Դիմասյան եպիսկոպոսներուն հեռագրած էր, որ հանուն Մայր Արքուն օծման ներկա զրաբին, թեպետ առաջինը հիմանդրության և եկրորդը ժամանակի սղության պատճենով չին կրցած ներկա ըլլալ» (ԲԱԿ Պատմ. 815):

Սահմակ կաթողիկոս հապալան իր անդրանիկ կոնդակի մեջ հիշում է Ամենայն Հայոց Հայրապետին և Հորդորում է աղոթել՝ Նորին Ս. Օծության երկարակեցության համար և հույս է հաւտնում, որ երկու Աթոռների միջև մի շարք խնդիրների պատճառով առաջ եկած խրամը պիտի լիցվի սիրով և միաբանությամբ:

«Նույն առաքելոյն խօսեներ կրկնելով, եթէ Ցիշեցի զարաջնորդս Զեր», կը երախրեմ «համայն հոգեծին որդիս Թաղէի և Թարբութիմէսոսի սրբազն առաքելոց և Մրցոյն Դրիգոր Պարքեի՝ լուսաւորշաց հոգոց մերց, որոց անտարանուրեամբ ծնեալ և սնեալ եմք ի ծոց Քրիստոսի Նկեղեցայն, պաղատան մատուցանել առ Աստուած վասն կենաց եպիսկոպոսապետին Հայկազնեց՝ Հայրապետին Ամենայն Հայոց և նախամեծաց Արքուն Մրցոյն էջմիածնի: Աստուած և Տէր կենացն ամենեցուն՝ պարզեցէ նորին

Ս. Օծութեան կեանս երկարս, և պայծառութիւն՝ նորա Գամուն», որոյ անունը սիրելի և նուիրական է ամէն նայ հաւատացելոց և Կիլիկիոյ Աթոռոյու վիճակաւրց հավատարապէս: Նորին Ս. Օծութիւնը և ես երկունեան ի Սիրիկիոսի հավատարապէս: Նորա Հնորհաւրական մաղթանեները՝ յայտարար միութեան և նշանակ հաջարեութեան» (ԲԱԿ Պատմ. 846):

Խրիմյանի և Խապալյանի կաթողիկոսության ամբողջ տեսողության երկու Աթոռների միջև հաստատվում է եղբայրական համադրժակցություն:

Ազգը Կենտրոնական վարչությունը «Խապալյանի Կիլիկիո կաթողիկոսական ընտրությունը քաջալերած ատեննին, այն համոզումը ունենին, որ պիտի վերջ գտնենի Քիֆսիզյանի հարուցած անտեղի խնդիրները, ինչպես ինքն Խապալյանն ալ կգրեր, թե «պիտի աշխատի կրկին Աթոռոց Հարաբերությունները քաղցրացնել և սուրբ միությունը պահպանեալ, և Ազգի կրկին հատվածոց, էջմիածնականաց և կիլիկեցվոց մեջ եղբայրական սեր հաստատելու: Իրոք ալ մինչև Խապալյանի Կոստանդնուպոլիս այցելելը երբեք անոր կողմեն խնդիր չհուզվեցավ, և այնպիս ըմբռնվեցավ, թե վարչական որոշմամբ ժամանակին Քիֆսիզյանի հաղորդած պայմանագիրը ըմունելի և գործադրելի նկատված է Խապալյանի Կողմեն» (Օրմ. Ազգ. Գ 2858):

Այնուամենանիկ Պատրիարքարանի և նորընտիր կաթողիկոսի միջև ծագում է «Աթոռու իննդիր մը, և անոր հաջորդ իրավասության խնդիր մը, որուն ի պատասխան Քիֆսիզյան կաթողիկոսի կողմէն առաջարկված և արված և իր թե անկն ընդունված և ստորագրված «Մրագիր Կիլիկիո կաթողիկոսական հանձնախմբի» վերնագրով 18 հոդվածներե բաղկացյալ գիր մը հանձնվեցավ Սահմակ կաթողիկոսին» (ԲԱԿ Պատմ. 885):

Այդ ծրագրի 1-ին և 2-րդ հոդվածները վերաբերում են Ս. Էջմիածնի Հայրապետության՝ «Յարաբերությունք Աթոռոյն Կիլիկիո ընդ Մայր Աթոռոյ Արարատական», ուր աւագած է.

«1. Ս. Էջմիածնի Մայր Աթոռո Գահակալն ինելով միայն Ընդհանրական Հայրապետն Ամենայն Հայոց, որո ընտրության կմասնակցին նաև Կիլիկիո թեմականք, Տանն Կիլիկիո կաթողիկոսը ճանշած է, կճանշնա և պիտի ճանշնա անոր գերազահությունը:

2. Ամենայն Հայոց Հայրապետն, որո ընտրության մասնակցելով Կիլիկիո Աթոռո թեմականք, կճանշնա նորա գերազահությունը իբրև մի մարմին Ընդհանուր Հայաստանյաց

եկեղեցվոր, պարտավոր է ընդունիլ և ճանաշել զԿաթողիկոսությունն Տանն Կիլիկիո իրքն մի ի նվիրական Աթոռոց և չանվանել զայն հնությալ և հակաթոռ (ԲԱԿ Պատմ. 885—886):

Մյուս հոդվածները շոշափում են Պատրիարքարանի, Ազգային կենտրոնական վարչության և Կիլիկիայի Կաթողիկոսական Աթոռուի հարաբերությանց վերաբերյալ խնդիրներ: Պատրիարքարանի, Ազգային վարչության և Խապայանի միջև ժագած իրավասությանց սահմանների և եպիսկոպոսական ձեռնադրությանց վերաբերյալ վեճերի առիթով, Խապայանը դիմում էր Խրիմյան Կաթողիկոսին, որ նա դատաստան անի:

Խրիմյանը գրում էր Սահակ Կաթողիկոսին. «Հետեւ սնափառ և ոչ էական խնդրոց, և վեհանձնութեամբ նայիլ յարտաքին ձեսկերպութիւնսն, և կը խրատէր պայքար մղել միայն ընդդէմ վնասաբեր խողնդրտաց, աշխատելով դաստիարակութեան հայ մանկուտյն, բարձրացնել զբարոյական անկեալ վիճակ ժողովրդեան գաւառաց և լուսաւորել զմիտս նոցա համերաշխ եղբայրութեամբ կենցաղավարի» (Մերոպաց վրդ. Նշանյան, «Կիլիկիո Կաթողիկոսության վերաբերյալ պատճեններ», ձեռագիր):

Սահակ Կաթողիկոսի պաշտոնավարության առաջին ժամանակաշրջանը, մինչև 1921, ինչպես նշում է Բարգեն վեհը (ԲԱԿ Պատմ. 774), «լի է դժբախտության, կոտորածի և տարագրության սրտաճմլիկ դրվագներով»: 1909 թվականին Աղանայի կոտորած, 1914 թվականին համաշխարհային առաջին պատերազմը, 1915 թվականին Ապրիլյան եղիունը և արևմտահայ ժողովրդի տարագրությունը: Տարագրում է նաև Սահակ Կաթողիկոսը Կիլիկյան ողջ ժողովրդի հետ, և «1915 հոկտեմբեր 31—1916 օգոստոս 29 իրք տարագրի կապրի Ս. Հակոբյանց վանքին մեջ... Ամիսներ կանցնեին, ծեմալ փաշան երբեմն կայցելը երուսաղեմ և Սահակ Կաթողիկոս ալ այդպիսի պարագաներուն կերթար ծեմալ փաշայի պաշտոնատեղին պարզ այցելության համար: 1916 մայիսի մեջ ծեմալ փաշան հրավիրած էր Սահակ Կաթողիկոսը մասնավոր տեսության մը համար եղիշե եպիսկոպոս Կարոյանը և Գյուտ եպիսկոպոսը հետք առնելով Սահակ Կաթողիկոս կերթար ծեմալ փաշայի ժամադրության: ծեմալ փաշան եպիսկոպոսներեն անջատ, առանձին կտսակցի Սահակ Կաթողիկոսին հետ, ուղղակի խընդիրը կրանա և կըսե թե՛ չենք ուզեր որ մեր թշնամիին հպատակ եղող կաթողիկոս մը մեր տերության սահմաններուն մեջ ապրող հայերում Հոգենոր Պետք ըլլա. և կառավարությունը որոշեց այդ հոգենոր հարաբերությունները խզել և փոխանակ երկու Կաթողիկոսություն

և երկու Պատրիարքություն ունենալու կմիացնել Կոստանդնուպոլսո և Օրուսաղեմի Պատրիարքությունները և Աղթամարի Կաթողիկոսությունը և կապահ միայն Կիլիկիո Կաթողիկոսությունը, որուն Աթոռը պիտի ըլլա օրուսաղեմի հայոց վանքը և իր տիտղոսը պիտի ըլլա Կաթողիկոս-Պատրիարք բովանդակ հայոց թուրքիո: Կեզրոնի կառավարությունը այս որոշումը տված և արդեն կանոնագիրն ալ պատրաստած է, ևս իրեն բարեկամ ուղեցի, որ այս նոր պաշտոնը Զեզ հանձնվի, քանի որ արդեն Սսի կաթողիկոսն եք ներկայիս: Ի՞նչ կըսեք, կընդունի՞ք: — Սահակ կաթողիկոս բոլորովին անակնկալի մը առջև շատաված կտսնե ինքովները: Ի՞նչ պատասխանելու էր, չէր կրնար դիտողություն ընել, թե ասիկա Հայ եկեղեցվոր դարավոր սովորության և ընդունված ու նվիրագործված կանոնին հակառակ էր, չէր կրնար ըսել, որովհետեւ այդ ժամանակամիջոցին ան գիտեր, թե տրամաբանական պատասխան, հին օրենքին չատագություն, որևէ օգուտ չունեին, հրամայվեր, պետք էր հնազանդիլ, ուրիշ միջոց շկար: Բայց Սահակ կաթողիկոս դժկամակ էր, ներկա կացությունը հայտնի էր, ապագան շատ մութ էր, ուստի իր ծերությունը պատրվակ ընելով, կինդրեր որ այդ ծանր լուծը իր տկար ուակրուն վրա շղովեր Սահայն ծեմալ փաշան շուտով տեղի տվող չէր, կապահանջեր որ կառավարության կարգադրությունը ընդունվեր և կըսե. «Ձեր անձը, Ձեր տկարությունը, ծերությունը մեկի դոկտի, Ձեր ժողովորդի սիրույն համար, ստանձնեցեք այս պաշտոնը, վստահ եղեք որ կառավարությունը ամեն նյութական և բարոյական օգնություն պիտի ընձեռե Ձեզի, Ձեր ժողովորդի հալածանքը պիտի դադրի, լավ խորհեցեք, ոչ թե իրք հրամանատար, այլ իրք Ձեր բարեկամը կխոսիմ Ձեզը: Սահակ կաթողիկոս ժամանակ շահելու համար կըսե. «Միշոց տվեք ինձ որ խորհիմ ու ապա պատասխանեմ»:

...Սահակ կաթողիկոս կերպառնա վանք, ընկճված և ցնցված՝ «Ախ, — կըսե Եղիշե և Գյուտ եպիսկոպոսներուն, — երանի թե մահը հասներ և զիս այս անտանելի կացությունն աղատեր, նույնիսկ Շահարս այս տեսակ նիլաղային զաղափար մը չինացավ, նայ ժողովուրդը անջատել եղմիածնեն, սուկալի բան է, բուրք այս անտեր ի վեր չէ կըրցած հասկեալ հայ ժողովուրդին մայնությունը, հայ ժողովուրդին հանդեպ եղմիածնի ունեցած պաշտումք»:

Նույն իրիկունը կպարզ անոնց ծեմալ փաշայի առաջարկությունը և տեղի ունեցած խոսակցությունը և եպիսկոպոսներու խորուրդը կհարցնի:

Հետ երկար խոսակցության կորոշեն, ընդունիլ առաջարկված պաշտոնը ի սեր ժողովորդին, թերևս կարելի է ժողովուրդը եղած տեղերնին հանգիստ պահել և եթե պատերազմը վերջանա, այս կամայական, մեզի համար արտառոց կարգադրությունը չեղյալ կնկատվի, մենք մեր Աթոռը կդառնանք և էջմիածինն ալ ըստ առաջնույն իր իրավասությունները կպահենք...»

1916 հունիսի 29/11 օգոստոսին Արդարության գործոց նախարարութենեն պաշտոնական հեռագիրը կհասներ և ինքն ակամա կրնդուներ պաշտոնը և կփոխադրվեր Պատրիարքարան օգոստոսի 6/19-ին, ...թափորով ուղղակի եկեղեցի կառաջնորդվի, կահակալի, շնորհավորություններ կընդունի և այն օրեն կծեռնարկե իր նոր պաշտոնին»:

Կառավարական հեռագիրը, ուղղված Զավեն պատրիարքին, ասում էր.

«Ամենապատիվ Տիր,

Կրոնից նախարարության կողմե Վեհափառ Սուլթանին ներկայացված և սուլթանական բարձր հրամանով վավերացված և այսոր թափվիմ Վաքայի մեջ հրատարակված Հայոց Կաթողիկոսության և Պատրիարքարան կանոնադրության համաձայն Սիսի և Աղթամարի Կաթողիկոսությունները և Կոստանդնուպոլիսու և Երոսաղեմի Պատրիարքությունները և այս Կաթողիկոսության միացած է: Հետեաբար Զեր պաշտոնը և Հայոց Պատրիարքարանի վերաբերյալ բոլոր գույքերը և պաշտոնաթուղթերը Կաթողիկոս Պատրիարքին կողմե փոխանորդ նշանակվելիք անձին հանձնվելու և մինչև այն ժամանակ սոտիկանական պաշտպանության տակ մնալու համար, Զեր Ամենապատվության մասնակցությամբ կնիքի տակ առնվելու պաշտոն տրված է ոստիկանության ընդհանուր տնօրեն՝ Ահմեդ և կրոնից տեսուչ՝ Պեհա պեյքրուն. ըստ այն պարու ու պատշաճը գործադրելու համար այս պաշտոնագիրը տրվեցավ:

11 շեկվալ 334 և 28 հունիս 332

Արդարության և կրոնից նախարարի փխանորդ (Ստորագրություն)»

(Զավեն արքեպիսկոպոս, «Պատրիարքական հուշերս, էջ 192):

«Պաշտոնական հեռագրեն քանի մը օրվեր տեղական կառավարութենեն Սահակ կաթողիկոսին կհանձնվի «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսության և Պատրիարքության» անունով տեսրակ մը, որուն գծած սահմաններուն մեջ պիտի գործեր Սահակ կաթողիկոս այդ կանոնագրի ուժով, թրքահայությունը բաժնված էր էջմիածնեն, Ազգային Սահմանադրությունը ջնջված էր, Կիլիկիո և Աղթամարի Կաթողիկոսությունները միացված և Պոլսու ու Երոսաղեմի Պատրիարքություններն ալ այս Կաթողիկոսության վրա ավել-

ցած էին, ու այդ կանոնագիրը վավերացված էր 1916 թվականի հունիսի 19-ին, սուլթանի և բոլոր նախարարներու կողմեն:

Նոր կանոնագիրը ըստ ինքյան ամրողովին բննադատելի և պախարակելի է, ան կրաղկանա 39 հոդվածներեա» (ԲԱԿ Պատմ. 948):

Կանոնադրության առաջին հոդվածում գրվել էր. «Սոս և Աղթամարի հայ Կաթողիկոսությունները միացված և Կոստանդնուպոլիսու ու Երոսաղեմի Պատրիարքություններն ալ այս Կաթողիկոսության վրա ավելցած են. օսմանցի հայերուն ընդհանուր հոգեոր նախագահությունն այս Կաթողիկոսության և Պատրիարքության կապատկանի և բոլորովին կտրված է իրենց կապն ու հարաբերությունը էջմիածնի Կաթողիկոսության հետո: Կաթողիկոսին ու պատրիարքին բնակավայրը է Երոսաղեմի Ս. Հակոբի վանքը և իր հոգեոր շրջանակն են օսմանյան երկրները»:

Կանոնադրության մյուս հոդվածները խոսում են Պատրիարք-Կաթողիկոսի ընտրության, իրավասությանց, խառն և այլ ժողովների կազմության, Պատրիարքարանի վարչության, առաջնորդարանների և այլ վարչական հարցերի մասին:

Ժամանակի Կոստանդնուպոլիսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը այս մասին գրում է. «Այս կերպով կշնչվեին ոչ միայն Ազգային Սահմանադրությունը, այլ նաև Կոստանդնուպոլիսը և Երոսաղեմի Պատրիարքությունները, որոնք կմիանալին Կիլիկիո Կաթողիկոսության, որուն Աթոռը Երոսաղեմ պիտի ըլլար: Իրականին մեջ Կաթողիկոս-Պատրիարքություն մը կկազմվեր թուրքիո սահմաններուն մեջ ապրող Հայոց համար: Ինձի կմնար այլևս տունս առանձնանալ և սպասել Սահակ կաթողիկոսի կարգադրության» («Պատրիարքական հուշերս», էջ 191—196):

Պատրիարք-Կաթողիկոս Խապայանը Երուսաղեմում պաշտոնավարեց 1916 թվականի շգոստոսի 19-ից մինչև 1917 թվականի նոյեմբերի 19-ը: Այդ տասնհինգ ամսվա ժամանակամիջոցում Սահակ կաթողիկոսը «վանքին կամ ժողովուրդին օգտակար գործ մը չէ կատարած, որովհետև կարելի չէր կատարել, ստիպված ընդունեց կաթողիկոս-պատրիարքության նորօրինակ պաշտոնը, հուսալով որ այդու կրնար ժողովուրդին օգտակար ըլլար, բայց իր հուսերուն մեջ խարվեցավ, ու այդպես խարվելուն մեջ երբեք հանցավոր չէ, իր տեղը ով որ ըլլար իր ըրածեն ավելի բան մը չէր կրնար ընել: Այս, Սահակ կաթողիկոս հախուռն գործող մը չէ եղած, հանդարտ ու լոին գործող մը եղած է և ի հարկին բողոքած է անիրավությանց դեմ, բայց լսելի չէ եղած» (ԲԱԿ Պատմ. 957):

1917 թվականի հոկտեմբերին թուրքական բանակը նահանջում է Պաղեստինից:

1917—1918 թվականներին Սահակ կաթողիկոսը ապաստանում է Դամասկոս: Անգլիացիների և արաբների կողմից թուրքերը վերջնականապես պարտվում են և քաշվում Սիրիայից դեպի Թուրքիա: Նրանց հետևից Ֆեյսալը անգլիական և արաբական զինվորներով գրավում է Դամասկոսը: Սահակ կաթողիկոսը հրավիրվում է ներկա լինելու կառավարական պալատ՝ էմիր Ֆեյսալի ընդունելության հանդեսին: Երբ Սահակ կաթողիկոսը հրավիրն ընդունում է, շուրջիններին ասում է: «Դոհություն Աստուծո, վերջապես ազատվեցա սա պիտակ տիտղոսին, Կաթողիկոս-Պատրիարք, այս ալ ընդհանուր թուրքիո: ուրիշ՝ հոգացան այս հակազգային և Հակաօրինական վանդալական գաղափարը: Փառք Տիրոջ, ազատեցանք թե կեղծ տիտղոսներե և թե՝ իրենցմեն: Ես միայն ուղիկի կաթողիկոս եմ, կդառնանք մեր ավերված բուլները շինելու (ԲԱԿ Պատմ. 959):

Սահակ կաթողիկոսը Հալեպից իր ժողովրդի բեկորների հետ մեկնում է նորից Կիլիկիա և 1919 թվականի հունիսին հասնում Սիս:

Սուսմ Սահակ կաթողիկոսին սպասում էին նոր վշտեր: 1920 թվականի հունվարի 20-ից մինչև փետրվարի 10-ը տեղի ունեցան Մարտի կոփները և 15 000 հայերի կոտորածը: Ֆրանսիացիները, լքելով Մարզը, հեռացան: Վրա հասան Հաճընի պաշարումը և հերոսամարտը, Դյորտ-յոլի և Օսմանիեի կոփները, Սսի պարզումը, Այնթեպի հերոսամարտն ու պարզումը (1920 ապրիլ):

1921 թվականի դեկտեմբեր ամսին Սահակ կաթողիկոսը ողառնության բաժակը ցմրուր քամեց, երբ բոլոր հայ ժողովուրդը արդեն հեռացած էր, ինքն ալ անդարձ մեկնեցավ Աղանային (ԲԱԿ Պատմ. 974):

Կիլիկիայի դատարկումից հետո գաղթական ժողովուրդն ու աստանդական կաթողիկոսը ապաստան գտան Սիրիայի և Լիբանանի նորակազմ պետությանց սահմաններից ներս: Տարագիր կաթողիկոսի առաջին գործը եղավ Սիրիա և Լիբանան հաստատված հայ գաղութների մեջ ռեկեղեցական և կրթական կազմակերպություն» մացնել, հավաքել հայության բեկորներին եկեղեցու և դպրոցի շուրջը: Կիլիկյան թեմերից միայն Հալեպի թեմն էր մնացել, և 1923 թվականի մայիսի 29-ին Հալեպի Ս. Քառասունից Մանկանց եկեղեցում Սահակ կաթողիկոսը կատարում է մեռոնօրներ՝ ի մսիթարություն ժողովրդի: Հալեպի թեմի համար կաթողի-

կոսական փոխանորդ է նշանակվում Խաղաղագույն վարդապետ Աջապահյանը: 1925 թվականի մարտի 3-ին Արտավազդ ծայրագույն վարդապետ Սյուրմեյանը ընտրվում է առաջնորդ Հալեպի թեմի:

«Մինչ Սահակ կաթողիկոս Հալեպի թեմին համար սույն կարգադրությունները կըներ, մյուս կողմեն կաշխատեր, որ հոգատար իշխանությանց կողմեն ինքը ճանչվեր իրեն հոգեոր պետ Սուրիո և Լիբանանի հայության: Այդ ալ իր փափագին համեմատ կատարվեցավ 1924-ին: Սահակ կաթողիկոսը քայլ առ քալ հառաջանար, ջանալով հարթել դժվարությունները: Կիլիկիո ժողովուրդը, նաև Փոքր Ասիր զանազան քաղաքներն հայության բեկորներ տեղավորված էին ի Հալեպ և շրջականները, ի Դամասկոս, ի Թեյրութ, ի Լաթաքիա և ի Կիպրոս, սակայն չը կրնար այս տեղերուն համար կաթողիկոսական փրխանորդներ՝ նշանակել, որովհետև Դամասկոս, Թեյրութ և Լաթաքիա երուսաղեմի պատրիարքության թեմերն էին և այդ տեղերը երուսաղեմի կողմեն մի-մի վարդապետ տեսուչներ կային և եթե ինքն ալ եկվոր գաղթականներու համար կաթողիկոսական փոխանորդ նշանակեր երկվություն պիտի առաջ գար, ուստի աշխատեցավ համաձայնության մը գալ երուսաղեմի հետ... մանավանդ Դուրյան պատրիարք փափագող էր Կիլիկիո Կաթողիկոսության վերակազմության համար և պետք եղած շանքերը շխնայեց Թեյրութի, Դամասկոսի և Լաթաքիո եկեղեցիներուն ու վարժարաններու շենքերուն Կիլիկիո Կաթողիկոսության փոխանցելու և իր տեսուչ վարդապետները վերցնելով երկվության առաջն առնելու համար, վերջապես 1929 թվի մարտ 6-ին երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանությամբ համաձայնության ընդհանուր ժողովն համաձայնությամբ համականի այդ կարգադրության» (ԲԱԿ Պատմ. 978—989):

Կիլիկիան թեմերի կազմակերպության հարցով 1929 թվականի ապրիլի 30-ին, Գևորգ Ե կաթողիկոսի հանձնարարությամբ, երուսաղեմ է մեկնում Հայրապետական պատվիրակ և եգիպտոսի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, «Դուրյան պատրիարքին հանձնելու համար Մայր Աթոռեն հղված կարևոր գրություններ և խորհրդակցելու համար անոր հետ: Իր այս այցելությունը սխալ մեկնությանց առարկա եղավ: Պոլսու «Ազգարար» թերթը իր 1929 մայիս 26 թիվին մեջ, և իրմեն առնելով ուրիշ թերթեր և հրատարակեցին, թե իր երուսաղեմ երթին պատճառը Ս. էջմիածնի Մայր Աթոռը արտասահման կամ Սուրբիա փոխադրելու մասին էջմիածնի մեջ նույնիսկ զգած:

ված պետքի մը շուրջ խորհրդակցությունն է» (Ա. Ալպոյանցիան, «Թորգոմ պատրիարք Գուշակյան», Կահիրե, 1940, էջ 498):

Թորգոմ սրբազնություն երուսաղեմ կատարած իր ուղևորության մասին գրում է հետևյալը. «Ամենայն Հայոց Վեհափառ Հայութաբետը պաշտոն տված էր իրեն երուսաղեմ երթալոյ տեսնել սրբազն պատրիարքը և պատվարժան միաբանությունը, իր անոնության առաջարկելու համար, որպեսզի նախ՝ Կիլիկիո Կաթողիկոսության Սուրբու մեջ կազմակերպումի գործը դուրսացնելու համար երուսաղեմի Աթոռը Կիլիկիան Աթոռին թողութամասկոսի, Բեյրութի և Անտիոքի իր եկեղեցիները, կալվածները և առաջնորդարաններ...»:

Երբ երուսաղեմ հասա, ամենամեծ հաճույրով տեսա, որ Միաբանական ընդհանուր ժողով վերջին մեկ որոշումը, որ պատիվ միայն կրերե երուսաղեմի սրբազն պատրիարք հոր և Ս. Աթոռը պատվարժան միաբանության վեհանձն ողջմտության, այդ հարցերն ալ կարգավորված էին արդեն Ամենայն Հայոց Ս. Հայրապետին փափագին համեմատ, նորին Ս. Օծության նամակը ստանալես ալ առաջ» («Սիոն», 1929, էջ 160):

Վերակազմված Կիլիկիո Կաթողիկոսության թեմերը լինում են Հայեպ, Բեյրութ, Դմամասկոս, Լաթաքիա և Կիպրոս:

Սկզբանազարդ Սահակ կաթողիկոսը մտածում է նաև Սսի Կաթողիկոսության տեսականության վրա. և 1928 թվի փետրվարին հրատարակում է իր «Կտակար»-ը, որը իրապես «կտակ մը ըլլալի ավելի Կիլիկիո Կաթողիկոսության տեսականության մղձավանքն էր» (ԲԱԿ Պատմ. 995):

«Կտակ»-ում Սահակ կաթողիկոսը, անդրադասնալով առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայ եկեղեցու առաջ ծառացած ռէական կենսական հարցեր»-ի վրա, գրում էր. «Խղճով, սրտով և հոգիով պարուրված ու պաշարված— ի՞նչ պիտի ըլլա Կիլիկիո Կաթողիկոսությունը և իր ժողովորդի պապան— հարցին անդորրացուցիչ լուծում մը գտնելու տաֆնապով կտառապինք, դժբախտաբար անորոշության ու անստուգության մեջ կտարութերինք անլույս և անհույս անդեկ նավու մը պես. այս պատճառով հարկադրվեցանք ներկայիվս խնդրել Զեր սիրելութենեն, որ անվերապահորեն Զեր կարծիքով և գաղափարով լուսավորեք զմեզ, որպեսզի անդորրացած խղճով փակենք աշքերնիս»:

Կիլիկիան Աթոռի գոյության, հարատեսաթյան մասին հայտնվում են բազմաթիվ կարծիքներ. «Եղան հրապարակավ ըսողներ

և գրողներ. Կիլիկիո Կաթողիկոսությունը միացնելու է երուսաղեմի Պատրիարքության» («Կտակ»), Ուրիշներ, որոնց թվում և Սահակ կաթողիկոսը՝ ավելի տրամարանական էին գտնում Կիլիկիայի Աթոռի միացումը «Անդհանրական Հայրապետության հետ»...» («Կտակ»): Այս հարցում շատերն էլ սրբանավոր և օրինական կտոնեին աթոռակցի մը օծումը»:

«Կիլիկիո Կաթողիկոսության ալետատան նավը խաղաղության և պահովության նավահանգիստը Հայցնելու համար», 1928 թվականին Սահակ կաթողիկոսը, «իր ազատ կամքով», աթոռակից կաթողիկոս է նշանակում հայ եկեղեցականության ամենակարող և բազմահմուտ եպիսկոպոսներից մեջին՝ արմաշական Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյանին, որը այդ օրերին երուսաղեմում, Դուրյան պատրիարքի հետ միասին, սրտեռանդն աշխատում էր երուսաղեմի Ս. Աթոռը պատվարժան վեհանձնան ամսագիրը և զասավանդում Ժառանգավորաց վարժարանում:

1931 թվականի ապրիլին Հալեպում գումարված Կիլիկիան թեմերի 35 հոգուց բաղկացած պատգամավորական ժողովը, օրինականացնելով Սահակ կաթողիկոսի ցանկությունը, Բարգեն եպիսկոպոս Կյուլեսերյանին ընտրում է աթոռակից կաթողիկոս։ Օծումը կատարվում է ապրիլի 26-ին, Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում։ Ապա «երկու կաթողիկոսները փառագոր հողարկով ճանապարհ ելան Հալեպին և փառավորագույն ընդունելությամբ մտան Բեյրութ և անտի եկան Անթիկիաս» (ԲԱԿ Պատմ. 1021):

Այսուհետև երկու կաթողիկոսները սերտ և սեռն, ձեռն ի ձեռն աշխատում են ամրացնել տարագիր Կիլիկիան Աթոռը Անթիկիասում։ 1930 թվականին արդեն գնվել էր Անթիկիասի վանքի այժմյան հողամասը իր շրջակա կալվածներով, 1930 թվականի հոկտեմբերին վերաբացվել էր Անթիկիասի Դպրեվանքը Շահե ծայրագույն վարդապետ Գասպարյանի վերաբացանքը։ Ապա բացվում է տպարանը և 1932 թվականի հունվարից սկսվում է հրատարակությունը Կիլիկիո Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկա»-ի՝ Բարգեն կաթողիկոսի իշմբարությամբ։

Երուսաղեմի հանգուցյալ պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, «Սիոն» ամսագրի 1936 թվականի մայիսի համարում, «Անթիկիաս» խմբագրականի մեջ,

խորհրդածելով Կիլիկյան Աթոռի և երկու կաթողիկոսների Անթիլիասում տարած ազգային և եկեղեցական գործունեության մասին, գրում էր Հետևյալը. «Հայ Եկեղեցվու տարեգործությանց մեջ այլևս պատմականացած անոն մըն է ան: Ո՞րքան իրական է՝ Կիլիկյան մեծ եկեղեց կամ աղետքեն վերջ հայության կարևոր մեկ մասին, ամենամեծ շափով կիլիկեհայության, զանգվածորեն տեղավորումը կիրանանի և Սուրբի Հյուրընկալ երկիրներուն մեջ, նույնքան իրական է անտարակույս Սոս Հայ Կաթողիկոսարանին կազմակերպումը կիրանանի նորակազմ տերության կեղրունին առընթեր ծովափնյա այդ սիրուն վայրին մեջ...: Ռուբինյանց շիշումին իրը կես դար միայն ետքը, երբ, պատմականորեն հասկնալի իրադարձությանց հետևանքով, հարկավոր նկատվեցավ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին վերադարձն ի Ս. էջմիածին, Կիլիկիո հայությունը, իր ազգային և եկեղեցական գոյության պահպանումին համար նույնիսկ, անհրաժեշտ զգաց Կաթողիկոսական Աթոռի մը ներկայությունը ի Սիս. գոհացում գտավ իր խղճատանքին այդ պահանջը, ու Կիլիկյան Աթոռը, իրու մասնավոր Կաթողիկոսություն շարունակեցավ իր վերջին տեղվույն վրա՝ մինչև ներկայիս իր տասնամյակ մը առաջ Ստուգդ է հետեւաբար, թե անկեց ու այդ ձեռվ, այսինքն իր մասնավոր կաթողիկոսություն է, որ անիկա փոխադրվեցավ ուր ուրեմն Անթիլիաս, մինչդեռ Կիլիկյան մյուս նախկին նստոցները Ամենայն Հայոց Հայրապետության նժդեհավայրեր էին իսկապես, քանի որ այդ թվականներուն իրապես Ս. էջմիածնի Աթոռն էր որ փոխադրված էր նույն վայրերը, ու, այդ իսկ պատճառով, Արևմուտք հաստատված կաթողիկոսները հաճախ կտորագրեին «Կաթողիկոս Ս. էջմիածնի պանդիտեալ ի Սիս», և այլն:

Ինչ որ ալ լինին այս մանրամասնությունները, սա ստույգ է սակայն, թե բոլոր այդ տեղափոխությունները, որոնք կատարվեցան ընդհանրական կամ մասնավոր կաթողիկոսության ձևին տակ, կատարվեցան պատմական ստիպողականությանց ներքև, ու մինչ ամենք մենք մեկնենք գիտենք, թե

ինչ պատմական հանգամանքներու մեջ է, որ տեղի ոնեցավ նաև այս վերջին տեղափոխությունը Անթիլիաս: Իր մասնավոր Կաթողիկոսության դիրքը պատճառ մը չէ երբեք, որ անիկա առարկա վիճինի ընդիմանության սիրույն, հարգանքին և հոգածության: Որևէ ազգային գործ, թե՛ իսկ ամփոփ սահմանի մեջ կատարված, երբ կկատարվի խղճմտորեն և բարի ջանադրությամբ, հետևաբար և գոհացուցիչ արդյունքներով, Ազգին ամբողջության է որ կպատկանի իր մատուցած ծառայությամբն ու օգուտովը: Իսկ այսպիսի մի վկայություն ազգային խղճմտանքն է ինքնին, որ պիտի տա անտարակույս ի պատիվ Անթիլիասի մեջ վերակազմված Կիլիկիո Աթոռին: Ան հազիվ յոթր տարիներու կարճ տևողության ընթացքին արդարացուցած է արդեն Ազգին և եկեղեցին հույսերն իր մասին»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ և պատվիրակ Գարեգին արքահիսկոպոս Հովսեփյանը 1936 թվականին Անթիլիաս այցելելուց հետո գրում էր հետևյալը. «Ուրախությամբ տեսանք երուսաղեմի Աթոռի նյութական և բարոյական գոհացուցիչ վիճակը, իր պատմական դերը կատարելուց զատ, ոչ պակաս կարևոր գործունեություն է ծավալում և մտավոր լուսավորության ասպարեզում. ապացույց «Սիրու» ամսագրի կանոնավոր հրատարակությունը, Դուրյան մատենաշարքը, մրցանակաբաշխության հաստատությունը հայագիտական ուսումնասիրությունների համար, Կյուղակներյան մատենադարանը փառավոր, ժառանգավորաց և Թարգմանչաց վարժարանները և միաբանության ժիր գործունեությունը յուր ավագ և երիտասարդ անդամներով:»

...Երուսաղեմում և Անթիլիասում անցրած մեր ժամանակը հոգեաես կազուուրման օրեր էին մեզ համար՝ տեսնելով կատարյալ համամտություն և սրտակից վերաբերմունք դեպի Հայաստանյաց Եկեղեցու և նորա Հայրապետության միասնականության գաղափարը և հարգանքը դեպի էջմիածնի Մայր Աթոռը և նորա Գահակալը:

(Հարունակելի)